

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 233-րդ հոդվածի երկրորդ նախադասությունում «և պահպանելու համար՝ գրավառուի կատարած և բռնագանձելու հետ կապված ծախսերի հատուցումը» բառերը փոխարինել «, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար գրավառուի կատարած կամ կատարվելիք ծախսերի՝ ներառյալ գրավի առարկան իրացնելու հետ կապված հարկերի գումարների հատուցումը, որոնք գրավառուն պարտավոր է վճարել որպես գրավատուի հարկային գործակալ» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 251-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հոդված 251. Գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարը բաշխելը

1. Գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից կամ գրավառուին կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած գույքի արժեքից՝ այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո բավարարվում են գրավառուի՝ գրավով ապահովված պահանջները, իսկ մնացած գումարը տրվում է գրավատուին: Գրավառուի՝ գրավով չապահովված պահանջները սույն կետով նախատեսված գումարից (արժեքից) բավարարվում են սույն օրենսգրքով և օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

2. Եթե գրավ դրված գույքն իրացնելուց ստացված գումարը կամ գրավառուին կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած գույքի արժեքը բավարար չէ գրավառուի պահանջները բավարարելու համար, նա իրավունք ունի պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Ընդ որում, այդ գույքի նկատմամբ գրավառուն չի օգտվում գրավի վրա հիմնված նախապատվության իրավունքից:

3. Այն դեպքում, երբ քաղաքացուն պատկանող գրավ դրված գույքն ի սեփականություն անցել է գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը), գրավ դրված գույքը, սույն հոդվածի իմաստով, համարվում է իրացված՝

1) բանկի (վարկային կազմակերպության) կողմից այդ գույքի հետագա օտարման օրը՝ օտարման գնով, եթե նման օտարումը տեղի է ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, ընդ որում, եթե գույքն օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա գույքը համարվում է իրացված օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնով, *բացառությամբ այն դեպքերի, երբ այդ*

գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում օտարվել է այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել է բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին, կամ

2) գույքն ի սեփականություն վերցնելուն հաջորդող վեցամսյա ժամկետի վերջին օրը՝ այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գնով, եթե այդ վեցամսյա ժամկետում գույքը չի օտարվել, ընդ որում, բանկը (վարկային կազմակերպությունը) պարտավոր է իր հաշվին ապահովել գույքի շուկայական գնի որոշումն անկախ գնահատողի կողմից:

4. Քաղաքացի գրավատուի (բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ) կամ նրա իրավահաջորդի մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցած համապատասխան գույքի վրա արգելանք դրվելու դեպքում սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքը կասեցվում է արգելանքի տակ գտնվելու ամբողջ ժամկետով:

5. Բանկը (վարկային կազմակերպությունը) և քաղաքացի գրավատուն կարող են համաձայնվել, որպեսզի սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված գրավ դրված գույքը, սույն հոդվածի իմաստով, իրացված համարվի այն բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցնելու օրը՝ այդ օրվա դրությամբ անկախ գնահատողի կողմից որոշված շուկայական գնով: Սույն կետով նախատեսված համաձայնությունը կնքվում է հասարակ գրավոր ձևով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքը տարածվում է միայն այն գույքի հետ կապված հարաբերությունների վրա, որը գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) սեփականության իրավունքով անցել է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

««Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ 1-ին ընթերցումից հետո ստացված դիտողությունների և առաջարկությունների

Առաջարկության հեղինակ	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Նախագծի նախկին դրույթը	Նախագծի վերաբերյալ առաջարկությունը կամ դիտողությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	««Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի երկրորդ պարբերություն	Այն դեպքում, երբ գրավ դրված գույքը սեփականության իրավունքով անցել է գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը), ապա գրավատուի՝ գույքն օտարելուց ստացված եկամուտ է համարվում գրավ դրված գույքի իրացման գնի (առանց անուղղակի հարկերի, եթե դրանք կիրառելի են) և վարկային պարտավորության դրական տարբերությունը:	Ելնելով նախագծով կատարվող փոփոխության տրամաբանությունից, համաձայն որի՝ գրավի առարկայի վրա բռնագանձում տարածած բանկերը (վարկային կազմակերպությունները) պարզապես հանդես են գալիս որպես միջնորդներ, առաջարկում ենք՝ այն դեպքերում, երբ գրավի առարկան կրկին վերադառնում է նախկին սեփականատիրոջը, բռնագանձման գործարքը չդիտել իբրև գրավատուի համար եկամուտներ առաջացնող գույքի օտարում:	Ընդունվել է: Պարբերությունը լրացվել է նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. <i>«Այն դեպքում, երբ բանկի (վարկային կազմակերպության) սեփականությանն անցած գրավադրված գույքը վերջինի կողմից կրկին օտարվում է այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել է բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին, ապա համարվում է, որ գրավատուն սույն կետի իմաստով գույք չի օտարել (գույքի օտարումից եկամուտ չի ստացել):</i>

ՀՀ կառավարություն	««Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի վեցերորդ պարբերություն	Սույն կետի իմաստով՝ գրավ դրված գույքի իրացման հետևանքով ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և իրացման գին են համարվում ... գույքն ի սեփականություն վերցնելուն հաջորդող վեցամսյա ժամկետի վերջին օրը և այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գինը, եթե այդ վեցամսյա ժամկետում գույքը չի օտարվել...:	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ կամ նրա իրավահաջորդի գործողությունների հետևանքով բանկը (վարկային կազմակերպությունը) կարող է զրկվել բռնագանձված գույքի հետագա օտարման հնարավորությունից, առաջարկում ենք այն դեպքերում, երբ այդ անձանց մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում համապատասխան գույքի վրա արգելանք է դրվում, հիշյալ 6-ամսյա ժամկետի ընթացքը կասեցնել:	Ընդունվել է: Հոդվածը լրացվել է վեցերորդ պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ կամ նրա իրավահաջորդի մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցած այդ գույքի վրա արգելանք դրվելու դեպքում սույն կետով նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքը կասեցվում է արգելանքի տակ գտնվելու ամբողջ ժամկետով»:
ՀՀ կառավարություն	«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետ	Այն դեպքում, երբ քաղաքացուն պատկանող գրավ դրված գույքն ի սեփականություն անցել է գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը), գրավ դրված գույքը, սույն հոդվածի իմաստով,	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շուկայական գնի վերաբերյալ վերապահումն ուղղված է գրավատուի շահերի պաշտպանությանը, առաջարկում ենք հիշյալ դրույթից բացառություն անել այն դեպքերի համար, երբ	Ընդունվել է: Տվյալ ենթակետը շարադրվել է հետևյալ կերպ. «բանկի (վարկային կազմակերպության) կողմից այդ գույքի հետագա օտարման օրը՝ օտարման գնով, եթե նման օտարումը տեղի է

		համարվում է իրացված՝ ...բանկի (վարկային կազմակերպության) կողմից այդ գույքի հետագա օտարման օրը՝ օտարման գնով, եթե նման օտարումը տեղի է ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, ընդ որում, եթե գույքն օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա գույքը համարվում է իրացված օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնով:	գրավի առարկան կրկին վերադառնում է նրան կամ նրա իրավահաջորդին, այլապես բանկը (վարկային կազմակերպությունը) հնարավորություն չի ունենա գույքը ետ վաճառել գրավատուին պարտավորության գումարի չափով:	ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, ընդ որում, եթե գույքն օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա գույքը համարվում է իրացված օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնով, բացառությամբ այն դեպքերի, երբ գույքն օտարվել է այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել է բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին»:
ՀՀ կառավարություն	«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետ	Այն դեպքում, երբ քաղաքացուն պատկանող գրավ դրված գույքն ի սեփականություն անցել է գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը), գրավ դրված գույքը, սույն հոդվածի իմաստով, համարվում է իրացված՝ ... գույքն ի սեփականություն վերցնելուն հաջորդող վեցամսյա ժամկետի վերջին	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ կամ նրա իրավահաջորդի գործողությունների հետևանքով բանկը (վարկային կազմակերպությունը) կարող է զրկվել բռնագանձված գույքի հետագա օտարման հնարավորությունից, առաջարկում ենք այն	Ընդունվել է: Հոդվածը լրացվել է 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «Քաղաքացի գրավատուի (բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ) կամ նրա իրավահաջորդի մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի

		օրը՝ այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գնով, եթե այդ վեցամսյա ժամկետում գույքը չի օտարվել, ընդ որում, բանկը (վարկային կազմակերպությունը) պարտավոր է իր հաշվին ապահովել գույքի շուկայական գնի որոշումն անկախ գնահատողի կողմից:	դեպքերում, երբ այդ անձանց մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում համապատասխան գույքի վրա արգելանք է դրվում, հիշյալ 6-ամսյա ժամկետի ընթացքը կասեցնել:	<i>շրջանակներում բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցած համապատասխան գույքի վրա արգելանք դրվելու դեպքում սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքը կասեցվում է արգելանքի տակ գտնվելու ամբողջ ժամկետով:»:</i>
--	--	---	---	---